

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵԼՈՒ 550-ԱՄՅԱԿԸ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԽՏՈՐՈԾ 1441 ԹՎԱԿԱՆԸ

«Եւ դարձեալ այր մի աստուածապաշտ եկն և ասէ. Ահա կանթեղ մի կախեցաւ յերկնից և լուսաւորեալ պայծառացաւ յաշխարհս ամենայն, և հարցանեմ. ո՞ւմ է կանթեղս այս. և ասէ այր մի. Կանթեղս այս Էջմիածնին է, որ բազում ժամանակաց հետէ խաւարեալ էր և այժմ ողորմեցաւ Աստուած և կամի լուսաւորել»:

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑԻ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցու պատմությունն անբաժանելի է հայ ժողովրդի պատմությունից: Մի կորովի ժողովուրդ, որը թեև աշխարհավեր արհավիրքների ականատես ու դժվարին ճակատագրի տեր, սակայն տասնյոթ դար շարունակ չի կորցրել իր եկեղեցու ինքնուրույնությունն ու փաստորեն՝ հոգևոր անկախությունը, և մի ավանդապահ եկեղեցի, որը նույնքան ժամանակ բազում փորձություններ դիմագրավելով հավատարիմ է մնացել իր հոգևոր հոտն ըստ ամենայնի հովվելու աստվածապատգամ առաքելությանը, ավելին, դեպքերի բերումով հաճախ ուսերին է առել նաև ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքը տնօրինելու բարդ գործը «ըստ կարի իւրում» պահպանելով նրա ֆիզիկական գոյությունն ու բարոյական նկարագրի ամբողջականությունը:



Ս. Էջմիածինը հարավ-արևելքից (մինչև թանգարանի մասնաշենքի կառուցումը՝ 1869 թ.)

Հայոց եկեղեցու՝ ուստի Հայոց պատմության կարևորագույն իրադարձություններից մեկը 1441 թվականին Ամենայն Հայոց կաթողիկոսական սուրբ Աթոռի վերահաստատումն էր իր նախնական վայրում՝ Լուսավորչահիմն Ս. Էջմիածնում: Հինգ ու կես հարյուրամյա վաղեմություն ունեցող այդ եղելությունը հիրավի բախտորոշ էր մեր ժողովրդի հետագա ճակատագրի համար, որովհետև զրկված լինելով պետականությունից և գտնվելով օտար, այլակրոն բռնապետությունների տիրապետության տակ, աշխարհասփյուռ հայությունը մեկընդմիշտ կապվեց հայրենի բնաշխարհին, համախմբվեց հոգևոր-եկեղեցական առանցքի շուրջ՝ միասնական կենտրոն ունենալով Ս. Էջմիածինը, պահպանեց նախնյաց ավանդներն ու մշակութային ինքնուրույնությունը և վերջին հաշվով, հենց դրա շնորհիվ հարատևեց:

Կաթողիկոսական Աթոռի փոխադրության նախապատմությունը, պատճառները, 1441 թ. բուն իրադարձությունը և դրան հաջորդած բազմապիսի դեպքերն անհնար է հանգամանորեն ներկայացնել մեկ հոդվածի շրջանակում և դրա կարիքն էլ չկա, քանի որ պատշաճ կերպով ուսումնասիրված է (Մ. Օրմանյան, Լ. Խաչիկյան և այլք): Ուստի ստորև համառոտ կանդրադառնանք այդ ամենին, միաժամանակ քննելով մինչև այժմ գրեթե չհետազոտված մի հարց, այն է՝ Ս. Էջմիածնի մշակութային դերը կաթողիկոսության վերահաստատումից հետո: Սա մի կարևոր խնդիր է, որովհետև փաստորեն սկիզբն է Ս. Էջմիածնի իրական հոգևոր վերազարթոնքի ու բարգավաճման, որի շարունակական ընթացքը, չնայած որոշ վայրիվերումներին, համառորեն ուղի է հարթել հարյուրամյակների միջով և շարունակվում է մինչև օրս: Կներկայացնենք նաև մի քանի նոր տվյալներ Կիրակոս Ա. Վիրապեցու մասին:

* * *

Ամենայն Հայոց կաթողիկոսությունն ի սկզբանե հաստատվել էր Վաղարշապատ մայրաքաղաքում Ս. Գրիգոր Լուսավորչի հայտնի տեսիլքի շնորհիվ 303 թ. կառուցված Ս. Էջմիածնում: Սակայն հաջորդ դարի երկրորդ կեսին քաղաքական նկատառումներով այն տեղափոխվեց Դվին, արաբական հալածանքների շրջանում՝ Աղթամար, Բագրատունյաց զորացման ժամանակ՝ Արգինա և Անի, իսկ Բագրատունիների անկումից ու Կիլիկիայի Հայոց պետության ստեղծումից հետո՝ Հռոմկլա, ապա Սիս (եղել են նաև միջանկյալ նստավայրեր): Երբ 1375 թ. կործանվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը, սկսվեց հայերի արտագաղթ, որի գագաթնակետը 1420 թ. Կոստանդին իշխանի գլխավորած գաղթականության անցումն էր Կիպրոս: Սատում մնացած կաթողիկոսությունը, զրկված պետական հովանավորությունից, թուլացավ նաև հայության նոսրացման հետևանքով, միաժամանակ, նրա՝ կաթոլիկ եկեղեցուն կատարած հին զիջումներին ավելացան նորերը, որով ավելի սրվեց հակասությունը բուն Հայաստանի եկեղեցիների հետ: XV դարի սկզբներին ստեղծվեց մի իրավիճակ, երբ կաթողիկոսությունը փաստորեն կտրվել էր Հայաստանի իրականությունից, լիովին չէր կատարում իր հոգևոր-եկեղեցական, մշակութային ու ազգահավաք դերը: Նման պայմաններում հայ եկեղեցու առավել հեռատես ու հայրենանվեր գործիչները, հատկապես Գրիգոր Տաթևացին ու նրա աշակերտները հղացան կաթողիկոսությունը վերատին մայր հայրենիք՝ Ս. Էջմիածին փոխադրելու գա-

ալեխաոն մորուօք կարճագունիւք (և) սպիտակատեսակ դիմօք..., Սիմէոն Կանանացի՝ սպիտակագոյն երեսօք և մորուօք թխագունիւք..., Յակոբոս Ալփեայ՝ շիկագոյն երեսօք և մորուօք...»[134]:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, այս պարագային կերպարվեստով դրսևորվող, մշակութային իրակությունն իր բոլոր մանրամասներով պայմանավորված էր Աստվածաշնչով, եկեղեցական ավանդությամբ և, միջնադարում մտակառուցման ընդհանուր սկզբունք ու չափացույց դարձած, աստվածաբանությամբ:

---

[184] ՄՄ. ձեռ. № 3105, թ. 612աբ: **Բաբկեն կաթողիկոս [Կիլեսերեան]**, Ցուցակ, էջ 712—713:





Եկեղեցու խորհրդանշական պատկեր

Կաթողիկոս Կիրակոս Ա. Վիրապեցին եղբայրների հետ

ղափարը և գործնական քայլերի դիմեցին (ավելի վաղ այդ գաղափարն արծարծել են Ստեփանոս Օրբելյանը, Հովհաննես Որոտնեցին և այլ նշանավոր գործիչներ): Դա որքան անհրաժեշտ, նույնքան էլ իրագործման տեսակետից դժվար ձեռնարկում էր, քանի որ Արարատյան երկրամասում չկար քրիստոնյա իշխանություն, բուն եկեղեցին տեղայնական շահերի ու դավանաբանական հարցերի շուրջ ծագած ներքին հակասություններ ուներ և վերջապես Սսի Աթոռը դյուրությամբ չէր ուզում գիջել դիրքերը: Հայոց մի շարք հոգևորականներ, Գրիգոր Տաթևացու սաներ Թովմա Մեծոփեցի և Հովհաննես Հերմոնեցի վարդապետների գլխավորությամբ հարկադրված էին նախապատրաստական, բացատրական ահռելի աշխատանք կատարել, օտար իշխողների հետ բանակցություններ վարել, դիմել համարձակ գործողությունների, որպեսզի իրականացնեն Աթոռի փոխադրությունը:

Նվիրյալների հետևողական ջանքերն արդյունք տվեցին 1441 թվականին: Սսից գաղտնի կերպով Հայաստան բերվեց Հայոց եկեղեցու գլխավոր սրբություններից մեկը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի Աջը, առանց որի անհնար էր կաթողիկոսական ձեռնադրությունը, մեռոնի Օրհնությունը և այլն: Արևելյան Հայաստանի վարչական կենտրոն Երևանում կարակոյունլուների պետության կուսակալ Յաղուբ բեկի համաձայնությամբ հավքվեցին գումարվելիք ազգային-եկեղեցական մեծ ժողովի մասնակիցները, թվով 300 բարձրաստիճան հոգևորականներ, ազնվականներ ու մեծահարուստներ, մեծաթիվ ժողովուրդ: Երևանի հայությունը ցնծության մեջ էր:

Թովմա Մեծոփեցին, որը ոչ միայն այս իրադարձության ամենագործուն մասնակիցն էր, այլև մանրամասնորեն շարադրել է կատարվածի պատմությունը, գրում է, որ Յաղուբ բեկին ներկայանալուց հետո ժողովականների հանդիսավոր թափորը ժողովրդի բազմության ու բեկի զինվորների ուղեկցությամբ, շեփորների ու թմբուկների ձայների տակ ուղևորվում է Վաղարշապատ: Ներկայացնելով հայերի համընդհանուր ոգևորությունը պատմիչը գրում է, թե այդ օրը հնչում էին գավառի բոլոր եկեղեցիների զանգերը, երիտասարդները գոչում էին, ծերերն աղաղակում ու ցնծությամբ օրհնում Աստծուն, մանուկները հրճվում էին, կանայք լաց լինում, իսկ տեղի մահմեդականները տեսնելով այս ամենը զարմանում էին. «Աստ էր տեսանել զուրախութիւն և զցնծութիւն ամենայն մերային ազինս. զի փողն զանգակացն գոչեր, երիտասարդքն գոչէին, ծերքն աղաղակէին և զԱստուած ցնծութեամբ օրհնէին, մանկունքն խայտային, կանայքն երկրպագութեամբ և լալով զամենեսեան զարհուրեցուցանէին և անօրինացն ուշ եդեալ զարմանային»[1]:

Մեծոփեցին հանդիսավոր երթի մուտքը Վաղարշապատ համեմատում է Քրիստոսի Երուսաղեմ կատարած մուտքի հետ. «Եւ որպես յաւուրս գալըստեան Փրկչին ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ մեծաւ ուրախութեամբ ընդառաջ ելին, նոյնպէս և այսօր Հայոցս եղև, զի վաղուց հետէ անտերունջ էին կացեալ և ոչ էր տեսեալ այսպիսի վարդապետք և եպիսկոպոսք ի մի միաբանութիւն: Եւ... փողով և թմբուկով, գոչմամբ բարձրագունի մտաք ի սուրբ քաղաքն Վաղարշապատ»[2]: Հնամյա Վաղարշապատում մայիսի 25-ին՝

---

[1] Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, հրատ.՝ Կ. Կոստանեանց, Թիֆլիզ, 1892, էջ 68:

[2] Նույն տեղում, էջ 68—69:

Քրիստոսի Համբարձման տոնի օրը բացված ազգային-եկեղեցական ժողովը նախ քննության է առնում 1439 թվականից Սսում աթոռակալող Գրիգոր Մուսաբեկեանց կաթողիկոսի հրաժարականը, որը մերժել էր Էջմիածին տեղափոխվելու մասին իրեն արված առաջարկությունը, և նրան հայտարարում է աթոռանկ: Այնուհետև սկսվում է նոր կաթողիկոսի թեկնածությունների քննարկումը, որի ժամանակ մի շարք տարակարծություններ են ծագում: Առկա չորս թեկնածուներից (Զաքարիա Հավուցթառեցի, Հովհաննես Հերմոնեցի, Գրիգոր Զալալբեկեանց, Զաքարիա Աղթամարցի) ոչ մեկը չի ստանում անհրաժեշտ քանակի ձայներ: Մի քանի օր տևած բանավեճը վերջպես հանգեցնում է որևէ խմբակցության հետ կապ չունեցող, չեզոք թեկնածուի՝ Կիրակոս Վիրապեցի վարդապետի առաջադրմանը: Նա ծնունդով վասպուրականցի էր, անաղարտ կենսագրությամբ, ճգնավորական կյանքը նախընտրող համեստ անձնավորություն, որը 32 տարի ճգնում էր Խոր Վիրապի վանքում: Ժողովականները համաձայնության գալով Կիրակոսին նախ ձեռնադրում են եպիսկոպոս, ապա Ամենայն Հայոց կաթողիկոս: **Ձեռնադրությունը տեղի է ունենում հայրենասիրական բուռն ոգևորության մթնոլորտում 1441 թվականի մայիսի 28-ին: Դրանով, շուրջ 950-ամյա ընդմիջումից հետո Հայոց կաթողիկոսությունը վերահաստատվում է իր հիմնավայր Ս. Էջմիածնում:** Թովմա Մեծոփեցին այս կապակցությամբ գրում է. «Ի ՊՂ (1441) թուականիս մեր, ազդեցութեամբ Հոգւոյն Սրբոյ, հրաշագործութեամբ բարերարին Աստուծոյ, միաբանութեամբ ամենայն Հայոց եդին կաթուղիկոս ի Սուրբ Էջմիածինն զաքանչելի և զփառաւոր այրն Աստուծոյ զտէր Կիրակոս պատրիարք և հայրապետ ամենայն Հայոց: ... Փառք Քեզ ամենասուրբ Երրորդութիւն Հայր և Որդի և Սուրբ Հոգի, զի կատարեցեր զխնդրուածս հայկազեան սեռի. և ճշմարտութիւն քարոզութեան Աւետարանին յայտնի եղև ամենեցուն, որ ասէ. Որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, որ բախէ՝ բացցի նմա...»[3]:

Նորընծա կաթողիկոսի առաջին գործերից մեկը եղավ սուրբ մեռոնի օրհնությունն ու դրա բաժանումը Հայաստանի եկեղեցիներին: Ապա հայրապետը հատուկ կոնդակով չեղյալ համարեց նախընթաց տասնամյակներին Հայոց եկեղեցու տարբեր հատվածների՝ միմյանց հասցեին արված նզովքները, սիրո ու միաբանության կոչ ուղղեց բոլոր թեմերին ու եկեղեցիներին: Կիրակոս Վիրապեցին նորոգեց Էջմիածնի տաճարը, բարեկարգեց վանական համալիրը, իսկ ռաբունապետ ու մատենագիր Թովմա Մեծոփեցին վերստին շունչ հաղորդեց հայատառ առաջին դպրոցի բնօրրանի նվաղած մշակութային կյանքին:

Թվում էր ամեն ինչ բնականոն հունի մեջ է մտնում, սակայն, ցավոք երկու տարի անց հին թշնամություններն ու անմիաբանության խոտելի սովորույթը կատարեցին իրենց սև գործը, 1443 թ. Կիրակոս Վիրապեցին աթոռանկ արվեց, կաթողիկոս հռչակվեց Գրիգոր Զալալբեկեանցը և համազգային միասնության հրաշալի գործընթացը մեծապես վնասվեց: Այս տխուր իրողության մանրամասներին չանդրադառնալով, նշենք, որ անկախ ամեն ինչից, պատմական հետագա ելևէջներից, 1441 թ. կաթողիկոսական Աթոռի փոխադրությունն Էջմիածին հիրավի ճակատագրական եղավ հայ ժողովրդի համար: Դա ոչ միայն Հոգևոր-եկեղեցական, այլև քաղաքական

---

[3] Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 51, 73:

խոշոր իրադարձություն էր, որի շնորհիվ հայությունը համոզվեց, որ անկախ հայրենիքի քաղաքական կացությունից, փրկության ու գոյատևման գրավականը հենց հայրենի հողում՝ Արարատի հովանու տակ ապրելն է, հարազատ եկեղեցու լուսավորչահիմն դավանանքին ապավինելը: Էջմիածինն այդուհետև, հատկապես XVII դարում, վերածվեց ժողովրդին համախմբող հոգևոր ջահի, հասարակական ու մշակութային կյանքը կարգավորող անփոխարինելի կենտրոնի:

Հայաստանեայց Առաքելական եկեղեցին ամեն տարի Համբարձման տոնակատարության ժամանակ հատուկ նշում է կաթողիկոսական Աթոռի՝ Էջմիածնում վերահաստատվելու փառավոր եղելությունը: Այդ կապակցությամբ եկեղեցիներում երգվում է Սահակ Զորափորեցի կաթողիկոսի «Էջ Միածին ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» հոգեզմայլ շարականը:

* * *

Մինչև կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածինը եթե ոչ մոռացված, ապա անշքացած «ի բազում ժամանակաց անտես արարեալ»[4] վիճակում էր: Ու թեև եկեղեցու հեռատես գործիչները նրա նախկին փառքը վերականգնելու հույսն էին փայփայում (դրա լավագույն վկայությունն է Ստեփանոս Օրբելյանի հայտնի «Ողբ ի Ս. Կաթողիկեն» մեծիմաստ քերթվածքը), բայց գործնական քայլերը հապաղում էին: Էջմիածնի այդ շրջանի հոգևոր մշակութային կյանքի անմխիթար վիճակի մասին կարելի է դատել թեկուզ այն փաստով, որ մինչև 1441 թ. գրված հայերեն ձեռագրերի հազարավոր հիշատակարաններում վանքը (ընդհանրապես Վաղարշապատը) չի հիշատակվում ոչ միայն որպես գրչության կենտրոն, այլև որպես որևէ ձեռագրի ընդիրատվության, պահպանության վայր: Այնուամենայնիվ, Էջմիածինը կաթողիկոսության վերահաստատմանը նախորդած տարիներին գործող վանք էր, իսկ նրա առաջնորդը նաև շրջակայքի եպիսկոպոսն էր[5]:

Իրավիճակը հիմնովին բարեփոխվեց 1441 թ. մայիսից, երբ Կիրակոս Վիրապեցու ձեռնադրությունից անմիջապես հետո Էջմիածնում սկիզբ առավ նորոգչական ստեղծագործ աշխատանքը: Ինչպես Մեծոփեցին է գրում. «...օր օրհնութեան և կաթողիկոս ձեռնադրութեան Էջմիածնին... ի նոյն օրն առեալ բահ մի ի ձեռս զառաջին տան հիմնարկութիւնն շինութեանն ես արկի եղբարք իմովք»[6]:

Վանքի տնտեսական վիճակը որոշ չափով կարգավորված էր 1431 թ. ազնվազարմ Ռոստոմ Օրբելյանի կատարած յոթ գյուղերի ընդիրատվությամբ[7], սակայն կաթողիկոսի ձեռնադրությունից հետո ավելի ամրապնդվեց, քանի որ «...աստուածապաշտ ազգս Հայկազեան Արարատ և կողմն Վասպուրականն մարմնաւոր պիտոյիք, անասնօք և չորքոտանիւք լցին զսուրբ Աթոռն»[8]:

---

[4] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմեց Լ. Խաչիկյան) մասն Ա, Երևան, 1955, էջ 531:

[5] Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 52, 64:

[6] Նույն տեղում, էջ 63:

[7] Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 39:

[8] Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 75:

Ինքը՝ Կիրակոս Վիրապեցին, որը ժամանակին Սարգիս և Վարդան «մեծ վարժապետաց» սանն էր եղել, միայն ճգնավորական կյանքի մեջ չէր պարփակված, այլև որոշակի մշակութային հակումներ ուներ: Հայտնի է, օրինակ, որ մինչև կաթողիկոս դառնալը նա եղել է Կաֆայում (Ղրիմ) և վերադարձին իր հետ Հայաստան է բերել քերականական և այլ նյութերի մի շատ արժեքավոր ժողովածու, որը խմբագրել է Թովմա Մեծոփեցին[9]:

Կիրակոս Վիրապեցու ձեռնադրությունից հետո, նրա ջերմ պաշտպան Թովմա Մեծոփեցին իր աշակերտների հետ միասին հաստատվում է Էջմիածնում: Բնական է, որ վաստակաշատ րաբունապետն այստեղ շարունակում է ուսումնակրթական գործունեությունը, ուստի և հանդիսանում Վաղարշապատի նոր դպրոցի հիմնադիրը: Այս գործում նրա աջակիցներից հայտնի են այդ ժամանակ Էջմիածնում գտնվող Կիրակոս Ռշտունեցին և Սարգիս րաբունապետը:

«Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակում տեղ գտած այն միտքը, թե «XIV—XVI դարերի ընթացքում Էջմիածնի դպրոցը չի գործել»[10] հեռու է իրականությունից: Դպրոցը գործել է, ընդ որում ոչ միայն 1441—1443 թթ. Մեծոփեցու ներկայության ժամանակ, այլև հետագայում: 1450 թ. Էջմիածնում մի ձեռագրի գրչությունը սկսած և Բյուրականում ավարտած Գրիգոր գրիչը հիշատակարանում նշում է իր ուսուցիչներին՝ «... բազմերախտ վարպետին՝ Երեմիայի» և Զորիկ մականունով Հովհաննես աբեղային[11], որոնց պետք է, որ Էջմիածնում աշակերտած լիներ, իսկ 1460—1461 թթ. Էջմիածնում աթոռակալած Զաքարիա Աղթամարցու համար մի հիշատակարանում ասվում է, որ նա այստեղ եղել է «խնամածու ուսումնասիրաց»[12]: Այս անուղղակի փաստերը վկայում են, որ Մեծոփեցու սկսած գործը շարունակվել է հետագա տասնամյակներին:

Կիրակոս Վիրապեցու աթոռակալության տարիները նաև Էջմիածնի գրչության կենտրոնի վերածնության շրջանն էին, ուր դարձյալ ծանրակշիռ է Թովմա Մեծոփեցու ավանդը: Այստեղ է նա գրել իր նշանավոր «Հիշատակարանը»՝ փոքրածավալ, բայց փաստաշատ մի աշխատություն, որը պարունակում է կաթողիկոսական Աթոռի Էջմիածին փոխադրվելու պատմությունը և այն մանրամասնորեն ներկայացնող գլխավոր վավերագիրն է: «Հիշատակարանը» բաղկացած է երեք բաժնից, որոնք համապատասխանաբար վերնագրված են՝ ա) Վասն միաբանութեան Հայոց և կաթողիկոս ձեռնադրութեանն, բ) Յաղագս Էջմիածնին օրհնութեան և կաթողիկոս ձեռնադրութեան ի նմա, գ) Վասն աքսորման տէր Կիրակոս կաթողիկոսին:

---

[9] Մեծոփեցու խմբագրած և նրա ցուցումով Հովհաննես Արճիշեցու ընդօրինակած ձեռագիրը պահվում է Մատենադարանում (№ 7117): Նրա մեջ պահպանվել է Աղվանից այբուբենի եզակի նմուշը: Հիշատակարանում կարդում ենք. «որք հանդիպիք... գրոյս, յիշեսջիք ի բարին Քրիստոս զճգնաւորն զԿիրակոսն՝ կենդանաթաղ գերեզմանին Գրիգորի Լուսաւորչին Վիրապայ, որ **եբեր զգիրս զայս ի Հայս ի Կաֆա քաղաքէն:** Եւ ես... սուտանուն վարդապետս Թովմա... վերստին արբագրեցի զսա»: ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 597:

[10] Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 444:

[11] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմեց՝ Լ. Խաչիկյան), մասն Գ, Երևան, 1967, էջ 412—413:

[12] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմեց՝ Լ. Խաչիկյան), մասն Բ, Երևան, 1960, էջ 156:

Ինչպես երևում է երկրորդ մասի վերջաբանից Մեծոփեցին մտադիր չի եղել շարունակելու շարադրանքը և սկզբնապես այստեղ է ավարտել այն. «Բայց աղաչեմ ամենայն վարդապետոք և եպիսկոպոսք և քահանայական դասուք, որ հանդիպիք սակաւ պատմութեանս... զսակաւ աշխատութիւնս իմ տեսջիք... թողութիւն հայցեցէք մեզ և վարդապետացն մերոց և ծնողացն մերոց և հարազատաց մերոց...: Եւ զոր ի հետ գայ, դուք գրեսջիք և մի՛ անփոյթ լինիջիք յետ մեր, աղաչեմ: ՊՂԲ (1443) թուականին»[13]: Սակայն հետագա դեպքերը, Կիրակոսի հեռացումն աթոռից, հեղինակին հարկադրել են ամբողջացնել պատմությունը, նրա ոգեշունչ առաջին և երկրորդ մասերին ավելացնել ողբաձայն երրորդ մասը: Մ. Օրմանյանն իրավացիորեն գրում է. «Երկրորդ հատվածին վերջը 1443 թվական է նշանակված և գրվածին գոհունակ ոճը կը ցուցնէ, թէ առաջին երկու մասերը գրած է Էջմիածնի մեջ, նույն տարվոյն սկզբները»[14]: Այսպիսով Մեծոփեցու «Հիշատակարանը» (առաջին երկու մասերը) կաթողիկոսության վերահաստատումից հետո Էջմիածնում ստեղծված ու մեզ հասած առաջին երկն է: Ուշագրավ է, որ արդեն 1443 թ. «Հիշատակարանը» շրջանառության մեջ է դրվել և որոշ գրիչներ օգտվել են նրանից: Մասնավորապես Հովհաննես (Ոհանէ) Թմոքեցին Սաղմոսավանքի մոտ գտնվող Սերկեվիլի անապատում ընդօրինակած Տոնականի (Մատենադարան, № 996) հիշատակարանում բազմիցս կրկնում է Մեծոփեցու շարադրանքի առանձին մտքերը[15]: Ընդ որում Հովհաննեսը հիշատակարանը գրել է նույն 1443 թ.[16], հետևաբար Մեծոփեցին Էջմիածնում նոր էր ավարտել «Հիշատակարանը» բայց այն արդեն տարածում էր գտել, հավանորեն ընդօրինակվել, բազմացվել տեղում: Աշխատության երրորդ մասը նա ավելացրել է երկու տարի անց՝ 1445 թ. Մեծոփավանքում[17]:

Կիրակոս Վիրապեցու օրոք Էջմիածնի վանքում էին գտնվում նաև այլ գիտուն վարդապետներ, որոնցից երկուսին նշում է Մեծոփեցին՝ «...զսպա-

---

[13] Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 74:

[14] **Մաղաքիա Օրմանյան,** Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 2135:

[15] Տեղի սղության պատճառով Մեծոփեցու երկից և Թմոքեցու հիշատակարանից համեմատական մեջբերումներ չենք կատարում, սակայն առկա նմանություններն ակնհայտ են, լինի դա Սահակ Պարթևի տեսիլքի մանրամասների հիշատակումը, Կիրակոս Վիրապեցուն տրված բնութագիրը, կամ թե «հնի ու նորի» համեմատության հատվածը: Տե՛ս Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 54, 59—61, 70, հմմտ. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 531—532:

[16] ԺԵ դարի հիշատակարանների ժողովածուում (մասն Ա, էջ 531) Հովհաննես Թմոքեցու հիշատակարանը զետեղված է 1442 թվականի տակ, ըստ հիշատակարանի սկզբի թվագրության՝ «ի թուաբերութեանս Հայկազեան տաւմարի ՊՂԱ (1442)... կատարեցաւ տեսիլ Սահակայ...», այնուհետև խոսվում է կաթողիկոսարանի վերահաստատման մասին: Փաստորեն նշվում է ոչ թե գրչության թվականը (գրիչը չի նշում՝ «յայսմ ամի»), այլ Աթոռի փոխադրության տարին, իրականից մեկ տարվա շեղումով: Քանի որ Մեծոփեցու «Հիշատակարանը» (Ա և Բ մասեր) որից օգտվել է Թմոքեցին, ավարտվել է 1443 թ., ուստի գրիչը նրան կարող էր ծանոթանալ ավելի ուշ: Սակայն որովհետև Թմոքեցին գործն ավարտել է Կիրակոս Վիրապեցու աթոռակալության ժամանակ (այլապես հիշատակարանում կնշեր հաջորդ կաթողիկոս Գրիգոր Ժ Ջալալբեկեանցին, որի ջերմ աջակիցներից էր Գաբրիել եպիսկոպոսը, իսկ Հովհաննես Թմոքեցին աշխատում էր հենց վերջինիս «իշխանության» տակ գտնվող վանքում), հետևաբար հիշատակարանը գրել է հենց 1443 թ.:

[17] Թովմա վարդապետը Մեծոփավանք վերադարձավ 1443 թ., երբ Կիրակոսը հեռացվեց Աթոռից: «Հիշատակարանի» երրորդ մասի վերջում նա գրում է, թե արդեն երկու տարի է, որ Վիրապեցու հալածիչներից ոչ մեկը չի զղջացել, ուստի գործն ավարտել է 1445 թ. (Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 86):

սաւոր վարդապետքն Էջմիածնին՝ զվարդապետն Կիրակոս Ռշտունեաց և զրաբունապետն մեր Սարգիս»[18]: Վերջինս, որպես ուսուցիչ, բնական է ուսուցչությամբ պետք է զբաղվեր, իսկ Կիրակոս Ռշտունեցուց հայտնի է մի փոքր ժամանակագրություն, որը հասնում է մինչև 1443 թ., Վիրապեցու աթոռանկ արվելը[19]: Վերջին իրողության մասին ցավով գրելով հեղինակը նաև ավելացնում է իր ու Սարգիս վարդապետի (րաբունապետի) կրած հալածանքի մասին[20]: Ակնհայտ է, որ Կիրակոս Ռշտունեցին ժամանակագրությունը կազմել է Էջմիածնում, որտեղից ստիպված է եղել հեռանալ նույն 1443 թ.: Լ. Խաչիկյանն իրավացիորեն այս հեղինակին նույնացնում է Կիրակոս Բանասերի հետ, որը միաժամանակ անց գրել է Թովմա Մեծոփեցու վարքը[21]:

Մշակութային կյանքի աշխուժացումն Էջմիածին է ձգել նաև այլ վարդապետների: Հայտնի է, օրինակ, որ Հակոբ վարդապետը չորս աշակերտների հետ եղել է այստեղ և իր կազմած ժողովածուի համար որոշ նյութեր հավաքել: Հիշատակարանում այդ մասին նշում է. «գրեցաւ... սակաւ մի ի յԷջմիածինն, ի ժամանակս Կիրակոս կաթողիկոսին»[22]:

Այս շրջանում վանքում բավականաչափ ձեռագրեր են կուտակվել[23], ընդօրինակվել են նորերը և ստեղծվել ինքնուրույն գործեր, ինչպիսիք էին Մեծոփեցու «Հիշատակարանն» ու Կիրակոս Ռշտունեցու ժամանակագրությունը: Կիրակոս Վիրապեցու ժամանակից պահպանվել է մի ուշագրավ ձեռագիր, որը մինչ այժմ հանգամանորեն չի քննվել, մինչդեռ այն հիշյալ կաթողիկոսի վերաբերյալ անգնահատելի նյութ է պարունակում: Մատյանը 1443 թ. Արարատյան գավառի Աղջոց վանքում ընդօրինակված Ավետարան է (Մատենադարան, № 6342)[24], գրիչներն են Գալուստը և Միխթարը, մանրանկարիչը՝ Ստեփանոսը: Ձեռագիրը ստացել է Մկրտիչ աբեղան ի հիշատակ իրեն, Աստվածատուր աբեղային և Կիրակոս կաթողիկոսին, որոնք բոլորը հիշատակարանում համարվում են հարազատ եղբայրներ: Հետաքրքիր է, որ ոչ Մեծոփեցու մոտ, ոչ էլ որևէ այլ սկզբնաղբյուրում չեն պահպանվել Վիրապեցու ազգականների, անգամ ծնողների անունները: Միայն Հովհաննես գրիչը Արճեշում 1441 թ. գրած հիշատակարանում նշում է՝ «ի կաթողիկոսութեան... տէր Կիրակոսի, որ մականուն Խլոց կոչի»[25], որից Լ. Խաչիկյանը եզրակացնում է, թե նա «Խլոց ազգատոհմից» էր[26]:

---

[18] Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 81:

[19] **Վ. Հակոբյան,** Մանր ժամանակագրություններ, հ. Ա, Երևան, 1951, էջ 113—124:

[20] Նույն տեղում, էջ 119, տե՛ս նաև Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 81:

[21] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Ա, էջ 507, 550:

[22] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 416:

[23] Հայտնի է, որ 1462 թ. մահմեդականները կողոպտել են Էջմիածնի վանքը և, հիշատակագրի վկայությամբ, տարել նաև «...Աւետարաններս և գրեանքս» (ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Գ, էջ 223):

[24] Ձեռագիրը գրված է թղթի վրա, ունի 240 թերթ (27×18 սմ), գրչությունը՝ բոլորգիր: Զարդարված է 10 խորանով, չորս ավետարանիչների պատկերներով ու համապատասխան անվանաթերթերով, լուսանցազարդերով, նաև ստացողի (եղբայրների հետ) ու մի եկեղեցու պատկերով:

[25] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Ա, էջ 516:

[26] Նույն տեղում, էջ 722: Կիրակոս կաթողիկոսի կենսագրության հիմնական տեղեկությունները հայտնում է Թովմա Մեծոփեցին. «...եդաք հայրապետ և կաթողիկոս... զտէր Կիրակոս Վիրապեցին, այր սուրբ և ընտրեալ, զի ի ՊԽԶ (1397) թուականէն, որ ձեռնադրեցաւ քահանայ ի տէր Պօղոս եպիսկոպոսէ ի (վանից) Սուրբ Առաքելոյն Թադէոսի և

Եվ ահա մեր ձեռագիր հիշատակարանը ներկայացնում է կաթողիկոսի երկու եղբայրներին: Նրանցից Մկրտիչը գրում է. «Ես նուաստս... Մկրտիչ աբեղայս **ստացայ զսուրբ Աւետարանս յիշատակ մեզ՝ Մկրտչին, և տէր Կիրակոս կաթուղիկոսին, և տէր Աստուածատուրին** և ծնողացն իմոց և եղբարցն և քուերցն և ամենայն ազգականացն...:

Արդ, աղաչեմ զհանդիպեալսդ ի սմա... յիշել... **զտէր Աստուածատուրն, և զտէր Կիրակոսն, և զտէր Մկրտիչն՝ աբեղայք և հարազատ եղբարք և զծնաւղսն մեր** և զամենայն ազգայինսն՝ զկենդանիսն և զհանգուցեալսն»[27]: Որ խոսքն իրոք հարազատ եղբայրների մասին է, երևում է նաև ձեռագրի էջերից մեկում պահպանված արժեքավոր մանրանկարից, ուր ներկայացված են նրանք երեքը՝ Կիրակոս կաթողիկոսը կենտրոնում, իսկ Մկրտիչն ու Աստվածատուրը նրա աջ ու ձախ կողմերում կանգնած: Սրանով պարզվում է, որ Կիրակոս Վիրապեցին ունեցել է աբեղա եղբայրներ (դատելով հիշատակարանում նրանց երկրորդ թվարկումից Աստվածատուրն ավագն է եղել, Մկրտիչը՝ կրտսերը), նաև քույրեր: Բայց ավելի կարևոր է կաթողիկոսի դիմանկարի առկայությունը: Ստեփանոս նկարիչն անկասկած ջանացել է հնարավորին չափ ճշտությամբ վերարտադրել Կիրակոս Վիրապեցու կերպարը և մեզ է հասցրել կաթողիկոսության վերհաստատումից հետո Էջմիածնում աթոռակալած առաջին հայրապետի թանկագին պատկերը:

Սակայն արվեստագետն ավելի խորիմաստ մտահղացում է իրականացրել: Կաթողիկոսի ու նրա եղբայրների մանրանկարի հանդիպակաց էջում[28] նա պատկերել է մի նրբագիծ, խորհրդանշական եկեղեցի՝ գմբեթին մեծ խաչ, որի երկու կողմերում գրված է. «Եւ խաչն բարձրացեալ»: Պատկերի ստորին մասում, եկեղեցու հիմներիզի և նկարի շրջանակի միջև գրված է. «Այս նորս է մեր եկեղեցի պայծառացեալ երեքլարեան ջահիւք և լապտերաւք»: Ուղղաձիգ կերոնների, կամարներից կախված լուսատու կանթեղների վերասլաց համաչափություններով կառուցված և հաղթական խաչազարդ գմբեթով ավարտվող եկեղեցու պատկերը խորհրդանշում է Հայոց կաթողիկոսության Էջմիածին տեղափոխվելու շնորհիվ պայծառացած Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին:

Դիմացի էջում, ինչպես ասվեց, երկու եղբայրների միջև պատկերված Կիրակոս Վիրապեցին է: Վերջինս կանգնած է քառաստիճան խարսխի վրա, դիմահայաց, աջ ձեռքով օրհնում է, իսկ ձախում պահում կարմրա-

---

ի տէր Զաքէոս եպիսկոպոսէ Խառաբաստայ Քաջբերունեաց, մինչև ի ՊՂ (1441) թուականն ոչ միս էր ճաշակեալ և ոչ գինի ըմպեալ... արբաբերան, հեզ և խոնարհ... գոլով ի գաւառէն Քաջբերունեաց ի գեղջէն Խառաբաստայ, յաշակերտաց մեծ վարժապետացն Սարգսի և Վարդանայ... երեսուներկու ամաւ յառաջ ելեալ ի գաւառէն իւրմէ, եկեալ բնակեցաւ ի սուրբ ուխտն և կենդանաթաղ գերեզմանն Լուսաւորչին ի Վիրապն, և անտի առանձնացեալ ի յանապատն Վանատայ» (Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 53—54):

[27] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն II, էջ 551:

[28] Ձեռագրի կազմման ժամանակ նրա սկզբի մասի էջերի հերթականությունը խախտվել է: Կաթողիկոսի պատկերով էջը (3ա), որի հաջորդ երեսին (3բ) Մատթեոս ավետարանիչի մանրանկարն է, այժմ անբնական կերպով հայտնվել է խորանների միջև: Մինչդեռ սկզբնապես Ավետարանի սկզբում եղել են 10 խորանները՝ վերջինը՝ 8ա էջում, դրան հաջորդել է եկեղեցու պատկերով և հանդիպակաց էջին կաթողիկոսի մանրանկարով բացվածքը՝ 8բ—9ա, որից հետո սկսվել է Մատթեոսի ավետարանը, ավետարանիչի պատկերով և անվանաթերթով՝ էջ 9բ—10ա: Ցանկալի է, որ ձեռագրի նորոգման ժամանակ վերականգնվի թերթերի ճիշտ հերթականությունը:

կազմ Ավետարան: Գլխին վեղար ունի, ուսերին՝ մոխրագույն թիկնոց, դիմագծերը նուրբ են, հայացքը՝ խաղաղ: Մկրտիչն ու Աստվածատուրը աջ ու ձախ կողմից փոքր ինչ թքվել են դեպի կենտրոն, ձեռքերը բարեխոսի դիրքով ուղղել կաթողիկոսի կողմը: Մկրտիչը մի ձեռքում բարձր, խաչագլուխ գավազան ունի: Յուրաքանչյուրի գլխավերևում գրված է նրա անունը:

Փաստորեն նկարիչը Ավետարանի մի էջում զետեղելով Հայոց եկեղեցու վերազարթոնքը խորհրդանշող լուսածիր եկեղեցու պատկերը, մյուսում՝ այդ զարթոնքին «միս ու արյուն» տված առաջին կաթողիկոսի մանրանկարը, ասես նկարչության լեզվով արտահայտել է այն, ինչը Մեծոփեցին արձանագրել է իր բեղուն գրչով՝ «Եւ ծերունի այր մի առեալ լապտեր ի ձեռս իւր, եկ ի վերին կամար եկեղեցւոյն և վառեաց զմեծ կանթեղ եկեղեցւոյն... կանթեղով լցաւ եկեղեցիս...: Փառք Քեզ ամենասուրբ Երրորդութիւն... զի կատարեցեր զխնդրուածս հայկազեան սեռի... հրաշագործութեամբ բարերարին Աստուծոյ, միաբանութեամբ ամենայն Հայոց եդին կաթողիկոս ի Սուրբ Էջմիածինն զքանչելի և զփառավոր այրն Աստուծոյ զտէր Կիրակոս...»[29]:

Այսպիսին էր սկիզբը՝ հավատավոր, միաբան և ոգեշունչ: Եվ այս է Հայոց պատմության բախտորոշ 1441 թվականի խորհուրդն ու պատգամը:

---

[29] Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, էջ 51, 72—73:



191-91